

9. **Հահապետ Գուհազար+** — Ննամ է 1629 ին Ագուլիսի մեջ և ատոր հա-



ԱԳՈՒԼԵՑԻ ԳՈՒԼՆԱԶԱՐ ԴԱՀԱՊԵՏ
Տպագրիչ ի Վենետիկ

մար « Ագուլեցի » կոչուած : Մեռած է 1 Յունվար 1695 ին : Վաճառական : Հայոց լուսաւորութեան գործին իրր մեկնեալ լիարուռն ծախսած է : Վաղելոյց զիրեր ձուլել տալով՝ Վենետիկ կը հիմնէ տպարան մը 1687 ին ու նոյն տարին լոյս կ'ընծայէ **Պարգարանութիւն Սաղմոսացը**՝ Պօլսեցի Յովնաննէս վրդ.ի ձեռամբ : Այդ զիրքին արտագրուած է իր կենդանագիրը որ ժամանակին տարագըր ցոյց կու տայ : Հայրենակից Մհո. Աստուածատուր որ իր սպասաւորն էր՝ մեծ ջանք տարած է նոյն տպարանին կազմակերպութեան և փորձերու սրբագրիչը եղած է :



10. **Ճիպոսօ Մօսէթթի+** — 1687 ին տպած է Յովն. Հոյով վրդ.ի **Պատասխանատրութիւն** անուն վիճարանական զիրքը : — Հ. Գաֆրանեան իր ձեռագիր ցուցակին մեջ « Սաղմոսաբան » մըն ալ կը յիշատակէ, 1685 ին այս Խոսալացիին տպարանէն լոյս ընծայուած :



11. **Հնսոն Մօսթօյի+** — Վենետիկցի իտալ. տպագրիչներէն հալ զիրքերու նրատարակութեամբ զբաղող այս անձին գործունեութիւնը բնդուն ու տիրապետող եղած է, 1695 ին սկսուած ու մինչեւ 1777 շարունակուած, նոյն իսկ Մխիթարեանց տպարանին բացումէն ալ յետոյ : Պօռօյի ընդունայն մաքառած է՝ անոնցը խափանելու համար, որովհետեւ 1789 ին Արքանայրը պաշտօնապէս կ'արտօնուէր Ս. Ղազարի մեջ սեպնական տպարան մը հիմնելու : — Պօռօյիի մամուլէն ելած հայերէն զիրքերն են (1695-1777) բուսականի կարգաւ . — Դաշանց բուրբ, Տօմարաց զիրք, Պարտեզ հոգեւոր (քանիցս), Ժամագիրք(ներ), Ժամերգութիւն ննջեցեաց, Քրիստոնէական(ներ), Նոր կտակարան(ներ), Համառօտ իմաստասիրութիւն, Սաղմոս(ներ), Պրեպիար (Լու.է բրգմ.), Գիրք քրիստ. վարդապետութեան (Մխիթարի Ա. զիրքը 1715), Համառօտ Ածարանութիւն Աղպերաի (Մխիթարի Բ. զիրքը), Կրք. աղօթից, Շարական, Գիրք մոլորեանց, Առաքինութեանց, Աղբիւր բարի, Հոգեւոր պորգմ., Մեկնութիւն «Հայր մեր»ի, Վարք Ս. Յովնաննէսի, Խոստովանարան Թովմ. Ագուինացոյն, Խրան զոջման, Տաղարան, Քերականութիւն(ներ), Դաշտիկ ծաղկալի, Ակն հոգւոյ, Ածարանութիւն(ներ), Մեկնութիւն (Ժողովոյի, նաեւ Աւետարանի), Գիրք ոսկեղէն և բուրբ քաղցրալուրք, Խորհրդատետր(ներ), Կրքութիւն կատարելութեան, Քանանայ համրակագոյն, Տօմար(ներ), Էֆիմէրտէ, Բառգիրք Հայկազեան (1749), Վարժումն կտակագրութեան, Գիրք օրինակաց, Ճշմարտութիւն յախտնական, Պատմ. վարուց Ոսկերեանի, Ազգաբանութիւն տոհմին Յարեանի՝ Մովս. Խորենացոյ, Աշխարհագրութիւն, Կերակուր քանանայից, Արնետ փրկութեան, Ժամամատոյց, Երգք հոգեւորք, ևն.ևն.:



12. **Ճուանի Մաշո+** — 1719 ին տպած է 2 զիրք, **Խակուսն Բրիստեկական** և **Պարտեզ** (Գ. տիպ) : — Իր տպարանը հիմնուած է արդեամբ Ճօրձի Ռիցցի = (Գեորգ Գալազեան) : — Ա. զիրքը քարգմանութիւնն է Պօլսեցի Յովնաննէս Վրդ.ի :

